Մկրտիչ Արմեն

Կոպեկ

Ծառահատների բրիգադը նստեց հանգստանալու: Ոչ թե առանձին-առանձին, ամեն մեկն իր տեղամասում, այլ բոլորը միասին, խմբված: Այդպես էր պահանջում պահակը: Չգիտես ինչու, նա համոզված էր, որ կալանավորները փախուստ կարող են կատարել հենց հանգստի ժամին եւ ոչ թե աշխատելու ընթացքում: Մի քանիսն ուզում էին շարունակել իրենց գործն առանց հանգստի, որպեսզի ստանային «մեծ պայոք», բայց պահակն արգելեց . եկեք բոլորդ այստեղ…

Ճամբարից եկավ մի կալանավոր, բերեց «ճաշը»: Այդպես էր անվանվում կարտոֆիլե խորսխով հիսունգրամանոց կարկանդակը: Ստացան, իհարկե, ոչ բոլորը, այլ նրանք, ովքեր երեկ չէ մյուս օրը գերակատարել էին իրենց նորման:

Ուտելուց հետո ցանկություն առաջացավ ծխելու: Ծխախոտ ունեին միայն մի քանիսը: Փաթաթեցին եւ նրանցից մեկը խնդրեց պահակին . թույլ տվեք կպցնել:

Պահակն իր ծխախոտը դրեց մի կոճղի վրա եւ քաշվեց հեռու: Բանտարկյալը մոտեցավ, կպցրեց, հեռացավ: Պահակը մոտեցավ, վերցրեց իր ծխախոտը, նայեց ուշադիր, թե արդյոք դրա հետ որեւէ վնասարարություն չկատարե՞ց կալանավորը: Չնկատելով դիվերսիայի որեւէ հետք, դրեց բերանը, շարունակեց ծխել:

Իգնատ Իլյիչ Իգնատովը, որին կալանավորները կրճատ կերպով անվանում էին «Իլի», ոչ կարկանդակ ստացավ եւ ոչ էլ ծխախոտ ուներ ծխելու, թեեւ դեմ չէր ոչ մեկին, ոչ մյուսին: Զրկված լինելով մարմնական այդ բավականություններից, նա

զբաղվեց հոգեկանով, փորձեց հիանալ անտառով:

Նրանք նստած էին ոչ թե բացատում, այլ ծառերի տակ: Ամառվա շոգ կեսօր էր, դրա համար էլ կալանավորները պատսպարվել էին ստվերի մեջ: Սաղարթների ծածկը նրանց գլխավերեւում այնքան խիտ էր ու համատարած, որ գետնի վրա ընկել էին արեւի միայն մանրիկ, ցանցառ բծեր: Միանգամայն հասկանալի է, որ այնտեղ չէր աճում ոչ մի թուփ, ոչ մի սեզ: Գետինն այդտեղ նման էր մաքուր ավլած-սրբած եւ վրան հին փշատերեւների փափուկ գորգ փռած հատակի:

Այդպիսի անտառը, անշուշտ, ունի իր յուրատեսակ գեղեցկությունը: Բայց «Իիի»-ն չկարողացավ զմայլվել դրանով: Տհաճ համեստություն . նրան թվաց, դա այն բանտախուցն է, որտեղ նա նստել էր մի տարի՝ նախքան դատապարտվելը: Բանտախուցն ամբողջովին ցածր էր գետնի մակերեսից եւ իր լույսն ստանում էր պատերի ամենաբարձրում, առաստաղի տակ բաց արված կարճ ու մանրիկ լուսամուտներից: Արեւի լույսն այնտեղից ընկնում էր ճիշտ այդպես՝ հեռվից եկած եւ ժլատ…

Ահա արեւի այս բիծը համեմատաբար մեծ է եւ երկարավուն, ճիշտ եւ ճիշտ ինչպես «մեծ պայոքի» կարկանդակը… Իսկ սա փոքր է ու երկարավուն՝ ինչպես մողես: Մողեսի մարմինը թեք-շերտավոր է: Դա փշատերեւներն են: Իսկ այս մի բիծը բոլորովին փոքր է ու կլոր՝ ինչպես միկոպեկանոց դրամ, միայն թե շատ ավելի մուգ: Այնքան է նման, որ թվում է, թե վրան երեւում է նույնիսկ թվանշանը…

Իգնատն ակամայից երկարեց ձեռքը եւ… վերցրեց այդտեղ ընկած միկոպեկանոց…

Միկոպեկանոց… բացականչեց նա՝ ծայր աստիճան զարմացած եւ ուրախացած Գտա… Հենց նոր…

Բոլորը ծիծաղեցին նրա վրա, հայհոյեցին, անվանեցին հիմար, ապուշ, եւ, իհարկե, «Իիի»…

Իգնատը, առանց նրանց վրա ուշադրություն դարձնելու, շուռումուռ տվեց կոպեկը, սկսեց զննել: Վաղուց էր դա ընկած եղել այդտեղ, պարզ էր: Կոպեկն ամբողջապես պատած էր ժանգի մուգ, համարյա սեւ փառով, որի տակից, սակայն, հստակ երեւում էին տառերն ու թվերը . 1 կոպեկ, 1937:

Ո՞վ կարող էր կորցրած լինել իր կոպեկն այդտեղ… Անտառը կուսական էր, բրիգադը գուցե մարդկանց առաջին խումբն էր, որ ոտք էր դրել այդ կողմերում: Բայց երկնքից հո չէ՞ր ընկել այդ կոպեկը՝ անձրեւի կամ արեւի հետ: Նշանակում է կորցրել էր որեւէ մեկը՝ մի, երկու կամ երեք տարի առաջ: Եվ կոպեկը, փոխանակ անցնելու մարդկանց աշխարհում ձեռքից ձեռք, փոխանակ մերթ-մերթ հանգստանալու դրամարկղների փայլուն արկղներում կամ փողամանների հաճելի փափկության մեջ՝ իր նման ուրիշ կոպեկների, տասըկոպեկանոցների, ռուբլիների կողքին, ընկել էր այդտեղ՝ սեւանալու եւ ընդմիշտ կորչելու համար…

«Այ քեզ երջանկություն, այ քեզ երջանկություն»… մտածում էր Իգնատը՝ անդադար հրճվելով կոպեկի փոխարեն, կոպեկի համար: Գտնվեց… Այն էլ ինչպիսի՛ հրաշքով… Իսկական հրաշք: Ախր Իգնատն սկզբում ուզում էր նստել մի ուրիշ տեղ, ավելի ստվերոտ, բայց այն տեղը գրավեցին ուրիշները, եւ նա ստիպվեց նստել այստեղ: Եվ բոլորովին պատահաբար նայեց այդ կողմ…

Կոպեկը կարող էր ծածկվված լինել փշատերեւներով, կարող էր նաեւ բաց լինել, բայց գտնվել ոչ թե արեւի տակ, այլ ստվերում: Եվ Իգնատը չէր նկատի այն: Անհնար, անհավատալի բան է դա, որ հսկայական տայգայում գաս նստես հենց այդտեղ, կոպեկի կողքին, եւ փշատերեւների, թափթփված ճյուղերի ու հազար տեսակ այլ աղբի մեջ գտնես կոպեկը…

Իգնատի մատները դողացին: Նա վախեցավ, թե կարող է վար նետել կոպեկը եւ չգտնել այլեւս: Բռնեց ավելի ամուր, նույնիսկ սեղմեց: Ո՛չ, նա այլեւս չի կորցնի, երբեք, քանի որ այդպիսի հրաշքով գտնվեց…

Վեր կացեք աշխատանքի, հրահանգեց պահակը՝ դեն նետելով ծխախոտի մնացորդը:

Այդ օրվա երկրորդ կեսն Իգնատի համար անցավ սովորականից հեշտ: Նա ուրախ էր, համարյա երջանիկ: Շուտ-շուտ ընդհատում էր աշխատանքը, վախեցած շոշափում ծոցագրպանը . տե՞ղն է արդյոք կոպեկը: Ախր, նա այնքան փոքր է եւ աննկատելի, որ կարող է կորչել, եւ չես էլ իմանա, թե ուր չքացավ:

Բայց կոպեկն իր տեղումն էր, նրա ծոցագրպանում, սրտի մոտ:

Վերադառնալով ճամբար եւ հագիվ ընթրելով, նա ելավ բակ եւ սկսեց փնտրել մի այնպիսի բան, որին քսելով, կարողանար մաքրել ժանգը կոպեկի վրայից:

Սպիտակ գիշերներ էին, լույսն այնքան ուժեղ էր, որ կարելի էր լրագիր կարդալ, եթե, իհարկե, նույնպես հրաշքով, ճարվեր լրագիր:

Իգնատն սկսեց փնտրել: Քարի կտոր անգամ չկար ճամբարում, ինչպես եւ չկար դրա շուրջը՝ անտառում ոչ մի տեղ: Զանազան կողմերում շաղ էին եկել երբեւէ այդտեղ գոյություն ունեցած ծառերի կոճղերը, բայց ինչի՞ էին պետք դրանք: Փայտը լիքն էր ամեն կողմ, բարաքներն ու դրանց քնելատեղերն ամբողջովին փայտից էին: Մի՞թե կարելի էր փայտով մաքրել մետաղը:

«Հիմար, բացականչեց նա հանկարծ մտքում, իր հասցեին, իսկ աղյուսնե՞րը»…

Նա ներս վազեց բարաք, որտեղ, բարեբախտաբար, ոչ ոք չկար: Տաք երեկո էր, բոլորը դրսումն էին: Հանելով գրպանից կոպեկը, սկսեց զգուշությամբ քսել երկաթե վառարանի հիմքի աղյուսներին…

Երբ սեւության տակից երեւաց մետաղի ոսկեդեղին գույնի առաջին բիծը, Իգնատը շողաց ուրախությունից՝ ճիշտ այդ գույնի նման: Ժանգը չէր քայքայել մետաղը, այլ միայն երեսանց էր պատել այն…

Իգնատը քսում էր կոպեկն աղյուսներին, քսում, եւ նայում էր շուտ-շուտ՝ չի՞ փչացնում արդյոք:

Շուտով կոպեկը փայլեց ամբողջովին, թեեւ, դրա վրա, տեղ-տեղ համառում էին գծիկներ եւ մանավանդ կետեր՝ տառերի ու թվանշանների անկյուններում թաքնված:

«Պետք է ասեղով մաքրել», եզրակացրեց Իգնատը:

Բայց ամբողջ ճամբարում ասեղ ուներ միայն մի բանտարկյալ, մի անխիղճ նախկին կուլակ: Նա իր ասեղը շատ թանկ գնով վարձու էր տալիս կալանավորներին եւ լավ ապրում էր այդ ասեղի հաշվին: Հագուստի վերանորոգման արհեստանոցը ճամբարից դուրս էր, ասեղներն այնտեղ առավոտյան տալիս էին հաշվով եւ երեկոյան էլ հաշվով վերցնում, որպեսզի ոչ մի ասեղ չմտնի ճամբար: Քրեականները շատ էին եւ նրանք սիրում էին տառեր ու նկարներ դաշել իրենց մարմնի վրա:

Կուլակը, որն աշխատում էր այդտեղ, հաջողեցրել էր մի անգամ խառնել հաշիվը եւ պահել իր համար մի ասեղ, որը դարձել էր այժմ նրա բարեկեցության աղբյուրը: Շատ բանտարկյալներ իրենց հագուստը չէին վստահում տալ արհեստանոցին վերանորոգման, որովհետեւ այնտեղից հաճախ ետ էին ստանում ոչ թե իրենցը, այլ ավելի վատերը: Ուստի եւ, վարձելով ասեղը կուլակից, նրանք իրենք էին կատարում վերանորոգումը: Իհարկե, թելը նույնպես գնելով նույն կուլակից:

Իգնատը գնաց նրա մոտ: Ասեղն այնտեղ չէր, վերցրել էին քրեականները: Նրանք վերցնում էին ձրի, ուստի եւ չէին յուրացնում, այլ միշտ վերադարձնում էին՝ ուրիշների համար: Կուլակն իր եկամուտներն ստանում էր միայն քաղաքականներից:

Մի քիչ հետո կբերեն, ասաց ասեղի տերը: Եկ՝ վերցրու:

Որքա՞ն պիտի վճարեմ:

Կես պայոք հաց:

Իգնատն անմիջապես համաձայնվեց, թեեւ կես պայոքը՝ դա «կես կյանք» էր:

Թել ուզո՞ւմ ես: Կես պայոք էլ տուր՝ թել կտամ…

Թել հարկավոր չէ, ատելությամբ նայելով այդ «չախկալի» ագահ դեմքին, մերժեց Իգնատը:

Հետեւյալ օրը, երբ աշխատանքի ժամին նա գրպանից հանեց կոպեկը եւ նայեց արեւի տակ, այն փայլում էր միանգամայն նոր ու թարմ: Եվ եթե չլիներ 1937 տարեթիվը, պիտի թվար, թե հենց նոր էր դուրս եկել դրամահատարանից:

Կոպեկը դարձավ Իգնատի մշտական զբաղմունքի առարկան, միակ բավականությունը նրա ողբերգական, անբովանդակ կյանքում:

Ամեն երեկո, երբ հոգնած կալանավորները քնում էին բարաքում, նա, իր տախտակի վրա պառկած, հանում էր գրպանից կոպեկը, բռնում աչքերի դիմաց եւ նայում: Երբ դեռ սպիտակ գիշերներ էին՝ նա նայում էր լուսամուտից թափանցող լույսի մեջ, իսկ երբ գիշերները դարձան մութ եւ բարաքներում սկսեցին վառել էլեկտրականություն, նա նայում էր դրա լույսի ներքո: Ավելի մոտ լինելու համար լամպին՝ նա իր ներքեւի հարմար տեղը փոխեց վերին մի տախտակի հետ:

Իգնատի օրերն այժմ նման էին անընդհատ սպասման, թե երբ պիտի գա երեկոն: Նա սպասում էր դրան՝ ինչպես մի հաճելի հանդիպման:

Թվում էր, թե ի՞նչ կարող էր ասել կոպեկը մարդուն: Նայեցիր մի պահ՝ եւ այլեւս ձանձրալի է շարունակել: Բայց Իգնատը նայում էր ու մտածում, եւ նրա մտքերը չունեին ոչ մի վերջ:

Որքա՜ն մարդ է աշխատել այդ կոպեկի վրա, մտածում էր նա: Նախ՝ հանքափորները: Ոչ, նախ՝ երկրաբանները: Ոչ, ոչ, նախ՝ ինստիտուտները, որոնք պատրաստել են այդ երկրաբաններին… Գնացքներ, որոնք փոխադրել են հանքը… Գործարաններ, որ հալել են մետաղը… Դրամահատարան, որ կտրել է դրամը… Վերցնենք, օրինակ, այս մանրիկ տառերն ու թվանշանները: Ինչպիսի՜ հմտություն է պետք եղել սարքելու համար դրանց կաղապարը կամ շտամպը… Կամ վերցնենք թեկուզ…

Մի ուրիշ անգամ Իգնատը պատկերացնում էր իր գտած ու մաքրած կոպեկն ուրիշ շատ կոպեկների հետ միասին: Կխառնես եւ այլեւս չես գտնի, ինչպիսի՜ երջանկություն: Նույնպիսի կոպեկ՝ ինչպես բոլորը: Կմոտենա մի կին՝ զովացուցիչ ջրերի վաճառասեղանին, կհանի գրպանից չորս կոպեկ . մի հատ

երկուկոպեկանոց եւ երկու հատ միկոպեկանոցներ: Առանց ուշք դարձնելու, որ դրանցից մեկն Իգնատի գտած կոպեկն է, կտա վաճառորդուհուն:

Հետաքրքիր է, նրա մոտից այնուհետեւ ո՞ւր կընկնի այդ կոպեկը… Հաջորդ երեկոն Իգնատը նվիրում էր իր կոպեկի հետագա ճանապարհորդությանը: Կոպեկը գնում էր նրանց տուն, ապա այնտեղից՝ խանութ, ապա՝ բանկ, ընկնում էր իրենց գործարանը՝ իր ընկերների ձեռքը: Նրանք դա թողնում էին լրագրի կրպակում, հետո այնտեղից, մի պատգամավորի գրպանում, նա գնում հասնում էր Մոսկվա…

Երբ նա այլեւս անկարող էր լինում զսպել քունը, խնամքով դնում էր կոպեկն իր գրպանը, վրայից դնում լի լաթի կտոր, որպեսզի դուրս չսահի, եւ քնում էր: Նա միշտ վախենում էր, որ մի օր կքնի՝ կոպեկը ձեռքին, եւ կկորցնի: Բայց, բարեբախտաբար, չէր պատահում այդպիսի բան:

Դժբախտությունը եկավ բոլորովին անսպասելի կերպով եւ անսպասելի տեղում: Ասենք ինչո՞ւ անսպասելի: Հարկավոր էր լինել մի քիչ շրջահայաց, եւ կոպեկը չէր կորչի…

Ամեն անգամ, երբ կալանավորներին տանում էին բաղանիք, նրանց լողանալու ընթացքում հագուստները ենթարկում էին ախտահանության: Դա կատարվում էր շատ պրիմիտիվ ձեւով: Վառվում էր մի վառարան: Դրա ետեւում գտնվում էր մի փոքրիկ սենյակ-խցիկ, առանց, իհարկե, լուսամուտի, մութ: Հագուստները կախում էին այդտեղ եւ դուռը փակում: Ներսում գոյանում էր շատ տաք օդ, որից ոչնչանում էին ոջիլներն ու մյուս միջատները: Երբ կալանավորները դուրս էին գալիս լողարանից, նրանց ոտքերի մոտ շպրտում էին հագուստների դեռ ջեռ կույտը: Չորս կողմից թափվելով դրանց վրա, ամեն մեկն սկսում էր ջոկոտել իրենը եւ երբեմն էլ ուրիշները՝ լավը, իր քրքրվածի փոխարեն:

Ոչ, Իգնատի վերնաշապիկն ուրիշը չյուրացրեց, դա անպետք վերնաշապիկ էր: Իգնատը հեշտությամբ գտավ դա եւ նախքան հագնելը, ձեռքը կոխեց դրա գրպանը:

Կոպեկը չկար…

Կոպեկը… բացականչեց նա բարձր:

Նորից ու նորից խառնեց գրպանը, հանեց լաթի կտորը, զննեց գրպանի անկյունները: Կոպեկը չկար…

Իգնատը նետվեց դեպի խցիկը, որի բաց դռնից փչում էր ցեռ օդը՝ ինչպես փոից: Բայց նրան ետ պահեց ոչ թե տաքությունը, այլ մթությունը:

Լուցկի, բղավեց նա, ո՞վ ունի լուցկի: Հաց կտամ փոխարենը: մի լուցկու դիմաց կես պայոք… Մի պայոք…

Բայց ոչ ոք լուցկի չուներ:

Ի՞նչ ես կորցրել, հետաքրքրվեցին մի քանիսը:

Կոպեկս…

Կարծեցին, թե խելագարվել է: Իսկ ոմանք՝ թե խորամանկություն է անում, ուրիշ, մեծ բան է կորցրել:

Իգնատը նետվեց խցիկ, մթության մեջ զույգ ձեռքերով շոշափեց գետինը, դուրս նետվեց միայն այն ժամանակ, երբ շնչահեղձ եղավ: Եկավ նաեւ հետեւյալ օրը՝ բերելով լուցկի: Նայեց, փնտրեց, չգտավ: Զննեց նաեւ հանդերձարանի հատակը: Նույնպես չգտավ:

Գուցե կորել էր ո՞չ այդտեղ, այլ անտառո՞ւմ… ճանապարհի՞ն…

Այն օրվանից հետո, անտառում գտնվելիս լիներ, թե ճանապարհին, Իգնատն ուշադիր նայում էր իր ոտքերի տակ, կռանում եւ ստուգում էր ամեն մի կասկածելի առարկա: Ապա նորից, մի քանի օրը մեկ, վազ էր տալիս բաղանիք եւ նորից ու նորից փնտրում այնտեղ, մինչեւ որ մի անգամ նրան վռնդեցին եւ պատվիրեցին այլեւս չերեւալ:

Կոպեկը կորել էր ընդմիշտ: Չէր կարելի հաշտվել դրա հետ, բայց այդպես էր:

Կալանավորները շարունակ ծիծաղում էին «Իիի»-ի վրա, նրան համարում էին խելագար: Ավելի կարեկիցները, առանց ծիծաղելու, նրան առաջարկում էի ուրիշ կոպեկներ, երկու, տասը, քսան կոպեկանոցներ: Բայց նա մերժում էր:

Նրան հարկավոր էր այն կոպեկը, որը նա հրաշքով գտել էր տայգայի անսահման տարածության մեջ, խնամքով վերցրել էր, խնամքով մաքրել, սեւ ժանգի տակից նորից հանել էր ոսկեդեղին մետաղը…

Բայց այդ կոպեկը, հենց այդ կոպեկը, չկար: Տեսնես ո՞րտեղ էր ընկել նա այժմ՝ արդեն տակետակ ժանգ դառնալու ենթակա: Եվ այժմ դրա վրա դամբանագրի նման էին տառերն ու թվանշանները .

1 կոպեկ, 1937: